

թեան ոչ միայն կարեւորութիւն տալու եւ նաեւ մեր Ազգային Պատուիրակութիւնն և Հասարակապետութիւնը, այլ և ուշի ուշով հսկելու, վասն զի ասով միայն թուրքի նենգաւոր հաշիւները յողը պիտի ցնդին և արհիւրեան պիտի լինին Հայոց անկախութեան հակառակորդները:

Հ. Բ. ՍԱՐԳՍԵԱՆ

ԵՌԱԳՈՒՆԵԱՆ ՊՐՕՇԱԿԻՆ

(Ժողովրդական քայլերգի)

✽ ✽

Դրօշակներու էն գեղանին,
Էն գեղանին դրօշակներու,
Եռագունեանն է ծիրանին,
Խրախոյս կոուի և յաղթելու:

Քեզ կը սիրենք, Եռագունեան,
Երփներանգ ճոխ և անուշակ.
Իմաստն ես դուն Ազատութեան,
ՀԱՒԱՐ ԿԵՆՔԻ նըշան գուշակ,
ԵՐԱՅՈՐԹԵԱՆ կապ հաստամուր...
Քեզ կը սիրենք, Եռագունեան,
Ո՛վ դրօշակ ձայն քաղցրալուր՝
Բոց և Ոգի Ազատութեան...

Ազատութիւն, Ազատութիւն,
Դուն մեզ իշխէ, դուն միայն դուն,

Հասարակութիւն՝

Եղբայրութիւն՝

Ազատութիւն,

Ո՛վ Եռագոյն՝

Իշխէ մեզ դուն,

Դուն միայն դուն,

Ազատութիւն—Հասարակութիւն—Եղբայրութիւն,
Ո՛վ նիշ սիրուն, դրօշակ խօսուն, պերճ Եռագոյն,
Իշխէ մեզ դուն,
Իշխէ մեզ դուն:

Հ. Գ. Ա.



ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ ԸՍՏ Ե. ՀԱՅԿԱՑ

(Տես Բազմալէպ էջ 23—1919)

Բ. Փարաւոնք, Մոլվեսի ժամանակները.

Ինչպէս որ Յովսեփայ ժամանակի փա-
րաւոնք կամ Փարաւոնները ստուգեցինք
իրենց ներքին նշաններով, այսպէս ալ
Մովսիսի ժամանակակից Փարաւոնները
ջանանք ստուգել, թէ և արժանագրութիւնք
նշանակած չեն այն մեծ դէպքը՝ որ ժո-
ղովուրդ մ'ամբողջ Եգիպտոսէն կը հե-
ռանայ: Սակայն թէ՛ Մովսիսի ծննդեան
ժամանակի փարաւոնք, և թէ՛ անոր Եգիպ-
տոսէն իսրայելացիները հանելու ժամա-
նակի փարաւոնք ունին որոշ նշաններ՝
որ յայտնի կ'ընեն թէ ասոնք իրարու
հետ առնչութեան մէջ էին:

Ըսինք թէ բազմաստուածեանները կոիւ
մղեցին ընդդէմ միաստուածեաններուն .
և արդարեւ, այս այնքան յայտնի է որ
մինչև իսկ Արեգացոց մայրաքաղաքը կոր-
ծանա՞ծ են. վասն զի եթէ կործանած
չըլլային բազմաստուածեանները Արեգ
քաղաքը, ինչո՞ւ փարաւոն՝ որ ըստ Ելից,
« Ոչ գիտէր զՍովսէփ », շինել կուտայ
դարձեալ Արեգ քաղաքը. « Եւ շինեցին
քաղաքս ամուրս Փարաւոնի զՓեղոն, և
զՌաֆայէ, և զՈֆն՝ որ է Արեգ » Ելք. Ա.
11. Բայց դիտելի է որ վերջի քաղաքն
Ովն որ է Արեգ է ըստ Եթանանից. զի
Եբրայականի և Վուլկատայի մէջ յիշատա-
կութիւն չկայ, վասն զի ոչ թէ նոր քաղաք
շինուեցաւ Ոֆն՝ որ է Արեգ իր առաջուան
պէս պաշտաման քաղաք, այլ այս անգամ
նորոգուեցաւ և բերդաքաղաք շինուեցաւ
ինչպէս Փեղոն և Ռամսեսն:

Սակայն որքան միաստուածեանները
կորուսին իրենց իշխանութիւննին, այսու
հանդերձ անոնց կուսակիցները կ'աճէին,
իսրայելացիները, այն աստիճանի՝ որ Ե-
գիպտացիներէն, այսինքն բազմաստուա-
ծեաններէն աւելի կը զօրանային. « Եկաց